

Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերն ընդգրկող թիվ 12 ընտրատարածում ադրիի 2-ին կտրոնի 206 ընտրական տեղամաս: Առավել խոշոր տեղամասերում կտեղադրվեն տեղապահներ, որոնց ստույգ թիվը դեռեւս հայտնի չէ: Թիվ 12 ընտրատարածի ընտրողների թիվը 152 805 է:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե ԶՈՎՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ 2003

Հասցե: ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Վապան, Գաղուսյան 20/32, 3301:  
 Գեո: (+374 285) 5 25 63  
 (+374 91) 45 90 47  
 (+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1730: Գինը՝ 100 դրամ



# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Ա՛ « āÇ » Ծ՛ Է՛ Ը՛ Թ՛ Կ՛  
 . 3 ՄԷՂ Զ ԾՅՕՍՅՅ  
 ° Ի՛ Զ՛ Ը՛ Թ՛ Կ՛ Թ՛ Կ՛ Թ՛ Կ՛ Թ՛ Կ՛  
 » Զ՛ Ը՛ Թ՛ Կ՛ Թ՛ Կ՛ Թ՛ Կ՛ Թ՛ Կ՛ ...  
 ° Ծ՛ Է՛ Ը՛ Թ՛ Կ՛



Վարչապետը հանձնարարել է արագացնել Սյունիքի մարզում ազատ տնտեսական գոտու ստեղծման գործընթացը

Վարչապետ Կարեն Կարապետյանի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ քննարկվել են Սյունիքի մարզում ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) կազմակերպմանը վերաբերող հարցեր:

ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանը զեկուցել է, որ ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի եւ «Սյունիք ազատ տնտեսական գոտի» ՍՊԸ ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում նախատեսվում է ստեղծել Սյունիքի ԱՏԳ կազմակերպիչ ընկերություն:

Կարեն Կարապետյանին մանրամասներ են ներկայացվել ԱՏԳ ձեւավորման քայլերի, պետություն-մասնավոր համագործակցության բանաձեւի, կազմակերպման առաջին փուլի եւ ծրագրի իրականացման ռիսկերի կառավարման վերաբերյալ: Նշվել է, որ 1-ին փուլի աշխատանքների համար նախատեսվում է ներդնել 2.5-3 մլն ԱՄՆ դոլար, իսկ շինարարության տեւողության եւ ավարտի ժամկետը՝ սահմանել ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ:

Վարչապետը հանձնարարել է արագացնել գործընթացը եւ կառավարության առաջիկա միստին ներկայացնել Սյունիքում ԱՏԳ ստեղծելու որոշման նախագիծ: Կարեն Կարապետյանը նշել է, որ համապատասխան որոշման ընդունմամբ կառավարությունը կհաստատի ԱՏԳ ստեղծման հայտը եւ կազմակերպիչին, իսկ արդեն սույն թվականի աշնանը Սյունիքի ԱՏԳ-ն կկազմակերպվի:

23 մարտի 2017թ. gov.am

## Բղենո Նորավանքի բարձրաքանակյալը ցուցադրվեց Հունաստանում

Հինգ տարի առաջ հանրապետության կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձի կապակցությամբ Հայաստանի պատմության թանգարանում «Քարերը ժողովելու ժամանակը» խորագրով ժամանակավոր ցուցահանդես կազմակերպելու նպատակով Սյունիքի մարզից մայրաքաղաք էին տեղափոխվել պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ: Թե՛ն ևսույն որոշումը պարտավորեցնում էր 2016-ի սեպտեմբերին՝ ցուցահանդեսի ավարտից հետո, պատմական

հուշարձաններն իրենց գտնվելու վայրերը վերադարձնել, տեղերում կասկածանքով էին ընդունել այդ որոշումը. ի՞նչ երաշխիք, որ հուշարձանները կվերադարձվեն նախնական

էջ 2

## Տաթև համայնքին տրամադրվել են շուրջ 167 միլիոն դրամի տեխնիկական միջոցներ եւ սարքավորումներ

Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր կենտրոնում ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության եւ համայնքների զարգացման աջակցող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները ծանոթացել են Սյունիքի մարզի Տաթև խոշորացված համայնքում իրականացվող ծրագրերի ընթացքին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Տաթև համայնքին «Տաթև համայնքի ներհամայնքային ճանապարհների սպասարկման, կանոնավոր աղբահանության, գյուղտեխնիկայի վերազինման եւ ջրամատակարարման համակարգի մասնակի բարելավման» ծրագրի շրջանակներում տրամադրվելու է 1 ինքնաթիվ մեքենա,

1 աղբատար մեքենա, 1 ավտոգրեյդեր, 2 կոմբայն եւ 1 բազմաֆունկցիոնալ էքսկավատոր:

Տրամադրվող տեխնիկական միջոցների եւ սարքավորումների գնման ընդհանուր արժեքը կազմում է 166 միլիոն 885 հազար 750 դրամ: 2 կոմբայնը եւ 1 ավտոգրեյդերը (թվով 3 մեքենա միավոր) արդեն իսկ գտնվում են համայնքում, մնացած թվով 3 տեխնիկա միավորների ձեռքբերման գնման գործընթացն ավարտվել է եւ առաջիկայում կհասնի համայնք:

Նույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել տեխնիկայի սպասարկման կայանատեղի, ինչպես նաեւ կզմվի 150 հատ աղբաման: Տեխնիկական միջոցները եւ սարքավորումներն օգտագործվելու են Տաթև խոշորացված համայնքի փողոցային լուսավորության համակարգի ստեղծման ու համալրման, համայնքի աղբահանության



համակարգի ձեւավորման ու սպասարկման, ներհամայնքային ճանապարհների սպասարկման համակարգի ձեւավորման, համայնքային տնտեսության պահպանման ու բարելավման

էջ 7

## Կառավարությունում քննարկվել է Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի արդիականացման եւ լիարժեք գործարկման ներդրումային ծրագրի ընթացքը

Վարչապետ Կարեն Կարապետյանը մարտի 2-ին ընդունել է «Քննարկ Գլոբալ» ընկերության գործադիր փոխնախագահի եւ գլխավոր գործառնական տնօրեն Կարլ Շնադտին:

Ջրուցակիցները քննարկել են Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի արդիականացման եւ լիարժեք գործարկման ներդրումային ծրագրի ընթացքը: Երկուստեք կարեւորվել են պարբերական աշխատանքային հանդիպումները, որոնք հնարավորություն են տալիս մտքեր փոխանակել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող որոշակի հարցերի շուրջ:

Կողմերը վերահաստատել են ներդրումային ծրագրի վերաբերյալ ստորագրված պայմանագրով ստանձնման պարտավորությունները պատշաճ կարգով եւ սահմանված ժամկետում կատարելու հանձնառությունը: Վարչապետ Կարապետյանը, կարեւորելով ծրագրի իրականացումը, ընդգծել է. «Պայմանագրով սահմանված այն կետերը, որոնց տակ եւ մենք, եւ դուք ստորագրել ենք, պետք է կատարենք»:

2 մարտի 2017թ. gov.am

# ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ. «Այսօր էլ համոզված եմ՝ հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը փեղի ունեցավ Մեդրին գիջելու գնով Ղարաբաղի հարցի լուծման փարբերակը մերժելու պատճառով»

## ԱՅՏԵՔԱՐՏ

Ծնվել է 1961թ. Արարատի մարզի Արարատ գյուղում:  
 1979-1981թթ. սովորել է Երեւանի թիվ 8 գեղարվեստի ուսումնարանում:  
 1984-1989թթ. սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում:  
 1981-1983թթ. ծառայել է խորհրդային բանակում:  
 1989-1993թթ. աշխատել է «Արարատարդշին» տրեստում՝ սկսելով աշխույժ պաշտոնից, հետագայում նշանակվելով լաբորատորիայի վարիչ, այնուհետև՝ տրեստի գլխավոր ինժեներ,  
 1994թ. անդամակցել է Երկրապահ կամավորականների միությանը:  
 1995թ. ընտրվել է Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավոր:  
 1993-1998թթ. աշխատել է «Արարատցիներ» ՊՓԲԸ-ում՝ սկզբում գրադեզնելով գլխավոր տնօրենի օգնականի, ապա գլխավոր տնօրենի՝ կապիտալ շինարարության գծով տեղակալի, այնուհետև նոր տեխնոլոգիական գծի տնօրենի պաշտոնները,  
 1998-1999թթ. աշխատել է «Արարատցիներ» ՊՓԲԸ-ում որպես գլխավոր տնօրեն,  
 1999թ. ընտրվել է Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավոր:  
 1999-2000թթ. գրադեզնել է 77 վարչապետի պաշտոնը,  
 2000-2003թթ. աշխատել է «Արարատցիներ» ՊՓԲԸ-ում որպես գլխավոր տնօրեն:  
 2001թ. հիմնել է «Հանրապետություն» կուսակցությունը:  
 2003թ. առաջադրվել է որպես 77 նախագահի թեկնածու: Լուրջ հնարավորություններ ունենալով հանդերձ՝ հանել է իր թեկնածությունը՝ աջակցելով 7ԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանին:  
 «Արդարություն» դաշինքի հիմնադիրներից է եւ 2003թ. այդ դաշինքի համամասնական ցուցակով ընտրվել է 77 ԱԺ պատգամավոր: ԱԺ ընտրությունները համարելով կեղծված՝ բոլորովին է բոլոր միտերը, իսկ պատգամավորին հասանելիք աշխատավարձը փոխանցել ՊՆ եւ մշակութային տարբեր ֆոնդերի:  
 2012թ. «Հայ ազգային կոնգրես» դաշինքի շրջանակներում ընտրվել է պատգամավոր, սակայն հրաժարվել է մանդատից՝ հակասություններ ունենալով Կոնգրեսի արտաքին եւ ներքաղաքական մոտեցումների շուրջ:  
 Բազմիցս ենթարկվել է քաղաքական հետապնդումների:  
 2004թ. ապրիլի 12-ից եւ 2008թ. մարտի 1-ից հետո նրան առաջադրվել է մեղադրանք՝ իշխանության բռնակալմանն ուղղված գործողությունների իրականացման կապակցությամբ: Անհիմն լինելու պատճառով քրեական հետապնդումն ի վերջո դադարեցվել է, իսկ հարուցված քրեական գործերը կարճվել են: Անուսանցած է, ունի 1 որդի, 2 դուստր:  
 2017թ. խորհրդարանական ընտրություններին «ԵԼԲ» դաշինքի կողմից առաջադրվել է ԱԺ պատգամավորի թեկնածու:



**Վ**ազգեն Սարգսյանի գերդաստանի եւ սյունեցիների միջեւ յուրօրինակ արյունակցություն կա՝ ձեւավորված ու թրծված Արցախյան պատերազմի դժնդակ օրերին: Այդ մերձավորությունը շարունակվեց եւ նոր դրսեւորումներ ունեցավ Սպարապետի եղբոր՝

Արամ Սարգսյանի վարչապետության շրջանում: Նա ձգտեց շարունակել Սպարապետի՝ Սյունիքի զարգացմանը միջավայրում քաղաքականությունը: Եվ այն օրերի համար անսովոր քայլերի դիմեց՝ կառավարության արտազնա նիստը Կապանում՝ մարզի բնակչու-

թյան մտահոգությունները փեղում քննարկելու համար, այցելություն Մեդրու փարածաշրջանի հարավարեւելյան գյուղեր՝ Նունաձորում (Նյուվադի), Շվանիձորում, Ալվանջում ոռոգման ջրի՝ փարիներով չլուծված խնդիրը կարգավորելու, ոռոգման համակարգում սակագնային քաղաքականությունը հոգուր մեղրեցու վերանայելու առաջելույթով: Առավել կարեւոր էր Ազարակի պղնձամուլիբդենային կոմբինատը հոգեվարքից հանելու նրա նախաձեռնությունը: Արամ Սարգսյանի եւ «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի՝ Երանելի եւ բազմերախար Մաքսիմ Հակոբյանի անկեղծ ջանքով մի քանի օր անց վերագործարկվեց Ազարակի կոմբինատը՝ հարկադիր պարապուրդից ու անհուսալի կացությունից դուրս բերելով մոտ հազար հանքագործի: Այնպես որ՝ Սյունիքում իբրեւ օրինակ է ստանալով քայլ ընդունվեց Արամ Սարգսյանի՝ Ազգային ժողովի ընտրությունների թիվ 12 ընտրատարածքում «ԵԼԲ» դաշինքից պարզամալորի թեկնածու առաջադրվելը: Իսկ ընտրատարածքը կապարած հերթական այցելության ժամանակ գրույցի հրավիրեցին Արամ Սարգսյանին՝ ակնկալելով ստանալ մեր ընթերցողին մտահոգող մի շարք հարցերի պատասխան:

– Պարոն Սարգսյան, որքանով տեղեկացանք, սա «ԵԼԲ» դաշինքի ներկայացուցիչների երկրորդ այցն է Սյունիքի մարզ:  
 – Այո, սա երկրորդ այցն է, առաջին այցի ժամանակ՝ քարոզարշավի շրջանակում, եղել ենք

երեք օրով: Որպես մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածու, այցելել եմ Ազարակ, Մեդրի, Քաջարան, Կապան, Գորիս, Սիսիան քաղաքներ, բուկլետներ եմ բաժանել, փողոցներում քարոզչություն արել, Կապանում նույնիսկ երեկոյան ժամերին բակային համոզականներ կազմակերպել:  
 – Հետաքրքիր է, որ ռեյտինգային համակարգին մեծամասնական անվանեցիք:  
 – Մեխանիզմն ինքը մեծամասնական է, անկախ այն բանից, որ սահմանադրության մասնագետները եւ ընտրական օրենսգրքը փոփոխողները համարում են, թե այն վարկանիշային է, առաջադեմ է: Ըստ իս՝ շատ ճիշտ կլիներ ու շատ ավելի բարոյական ու անկեղծ, եթե ասվեր, որ դա մեծամասնական ընտրակարգ է, եւ Ազգային ժողովի 50 տոկոսը ձեւավորվելու է մեծամասնական ընտրակարգի հենքի վրա: Ընդ որում՝ թշնամանքն էլ ավելի քիչ կլիներ, որովհետեւ Հայաստանի նման երկրում, որտեղ պատգամավորի 1500-ից ավելի թեկնածու է առաջադրված եւ բոլորն էլ բարեկամներ ու գաղափարակիցներ ունեն: Այդ ամենը հանգեցնում է չպարպող թշնամանքի... Եվ պայքար է ընթանում նաեւ նույն թիմի ներսում, հիմնականում՝ իշխանական, ընդդիմադիր թիմերում չեն տեսնում նման պայքար, որովհետեւ ընդդիմադիր թիմերի համար այդ քանակի թեկնածու առաջադրելը բավականին բարդ էր՝ մարդկային, նաեւ նյութական ռեսուրսի առումով, որ պակաս կարեւոր չէ. 100-ից ավելի թեկնածուի միայն բուկլետների ծախսը մեծ գումար է կազմում: Լուրջ թվերի մասին է խոսքը, իսկ Հայաստանն այդքան հարուստ երկիր չէ, եւ թեկնածուներն էլ այդքան միջոցներ չունեն:

## Բղենո Նորավանքի բարձրաքանդակը ցուցադրվեց Հունաստանում

տեղեր: Քիչ չեն դեպքերը, երբ պատմական հուշարձաններ են տեղափոխվել եւ այդպես էլ չեն վերադարձվել մշտական տեղադրության վայրեր: Եվ ահա տեղեկացանք, որ հուշարձանների վերադարձման գործընթացը կայացել է:  
 Սյունիքից տեղափոխվել է վերադարձվել են՝ ըստ Հայաստանի պատմության թանգարանի՝ խմբագրությանը տրամադրած ցուցակի, Հարժիսից՝ մարդակերպ կուռք (Քրիստոսից առաջ երկրորդ հազարամյակ), Վերիշենի Սբ Հովհաննես եկեղեցու շրջակայքից՝ խոյակ (5-6-րդ դարեր), Գորիսի պատմության թանգարանից՝ օրորոցածեւ տա-

պանաքար (16-17-րդ դարեր), բարձրաքանդակ Մերովբեի պատկերով (9-10-րդ դարեր), տապանաքարեր (16-17-րդ դարեր), բարձրաքանդակ՝ Բարձրավանի Բղենո Նորավանքի շրջակայքից (10-11-րդ դարեր):  
 Ինչպես «Սյունյաց երկրին» փոխանցեց Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Գրիգոր Գրիգորյանը՝ անցած տարի Հունաստանում (Աթենք) կայացած ցուցահանդեսին, որին մասնակցում էին Հունաստանի նախագահը, այլ բարձրաստիճան հյուրեր, ցուցադրվել էր նաեւ Բղենո Նորավանքի բարձրաքանդակը (լուսանկարում):

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ



# ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ. «Արցախի հակամարտության կարգավորման ձգձգումը Հայաստանին արյունաքամ է անում»

Հարցազրույց թիվ 12 ընտրատարածքում «Կոնգրես-ՌԺԿ» դաշինքի պատգամավորի թեկնածու Դավիթ Մաթևոսյանի հետ

**Դ**արո՞ն Մաթևոսյան, ժամանակները փոխվում են, քաղաքական նոր ուժեր եւ նոր գործիչներ են ծնվում, մի մասն էլ՝ մարում, բայց Դուք մնում եք Ձեր դիրքում՝ հավատարիմ որդեգրած գաղափարախոսությանն ու սկզբունքներին: Ինչպե՞ս է ստացվում:

– Այդ ամենը միանշանակ պայմանավորված է սկզբունքների մեջ համոզվածությամբ, որանց հավատարիմ լինելու հանգամանքով, անձնական հավակնությունների բացակայությամբ ու մեր հաստատականությամբ:

«Կոնգրես-ՌԺԿ» դաշինքն ընտրություններին մասնակցում է խաղաղության ծրագրով, որը նորություն է: Այդ թեման շատ ակտիվ քննարկվել է 1994թ. զինադադարից հետո, եւ 1997թ. ՀՀ ղեկավար կազմն ամբողջությամբ համոզված է եղել, որ այդ հարցը պետք է հանգուցալուծել փուլային տարբերակով՝ փոխզիջումների հիման վրա, եւ որ ստատուս-քվոյի պահպանումը կործանարար կլինի ՀՀ համար: Սակայն հետագայում, երբ հայկական կողմի նախաձեռնությամբ եռամսիսազահները ներկայացրել են Ղարաբաղի հակամարտության կարգավորման փուլային տարբերակը, դասական ձևակերպմամբ «հայտնի ուժերը» փոխել են իրենց դիրքորոշումը եւ դեմ գնացել ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Արդյունքում պարտադրվել է նրա հրաժարականը, եւ նոր իշխանությունները համարել են, որ պատերազմի սպառնալիքի, շրջափակման եւ թշնամանքի պայմաններում հնարավոր է զարգացնել ՀՀ-ն ու ԼՂՀ-ն: Անցել է 19 տարի, եւ վերլուծություններն ու փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանը ոչ միայն չի զարգացել, այլ եւ հավասարակշռությունը խախտվել է ի վնաս մեզ թե՛ ռազմական, թե՛ տնտեսական, եւ թե՛ դեմոգրաֆիկ առումով, ինչը կամխատեսելի էր:

Կարծում եմ՝ ՀՀ իշխանությունները 1998 թվականից հետո իրականում միջազգային հանրության արտաքուստ ցույց են տվել, թե հավատարիմ են մնացել հարցի խաղաղ կարգավորմանը, բայց իրենք հավատարիմ են մնացել իրենց նպատակին: Այսօր ունենք ծայրահեղ վիճակ, բայց թերեւս այս պայմաններում նույնիսկ, Սերժ Սարգսյանի ձեռնարկմամբ՝ 80-ականների զինատեսակներով անգամ, հնուտ եւ գրագետ ռազմավարություն իրականացնելու դեպքում, հնարավոր է սահմանների անառնելությունը պահել որոշ ժամանակ, չգիտեմ՝ 20 տարի, 50 տարի... Բայց այս հարցին նայում ենք հեռանկարի կտրվածքով, թե ինչպիսի վիճակում ենք հայտնվելու հետո: Ինձ համար ամենամտահոգիչ փաստը դարձահասակ երեխաների թվաքանակի անկումն է: Համրակրթական դպրոցների 1-10-րդ դասարաններում, վիճակագրական տվյալներով, 1997-98 ուստարում սովորող 592 հազար աշակերտի համեմատ այժմ սովորում է 300 հազարը: Մեր երկրի արտաքին պարտքը կազմում է 5 մլրդ, պետական պարտքը՝

6 մլրդ դոլար: Ժամանակին, երբ հակադրվում էին Լեւոն Տեր-Պետրոսյանի խաղաղության ծրագրին, մասնավորապես Ռոբերտ Քոչարյանն ասում էր, որ կբարելավենք հարաբերությունները Սփյուռքի հետ եւ տարեկան կներգրավենք 500 մլն դոլար, բայց, ինչպես ժամանակը ցույց տվեց, 25 մլն դոլարից չի ավելանում այդ գումարը: Ո՞վ կարող է երաշխիք տալ, որ պատերազմի սպառնալիքի պայմաններում այս վիճակը հետագայում բարելավվելու է:

– Առանց Լեւոն Տեր-Պետրոսյանի ակտիվ մասնակցության դժվար չէ՞ ձեր խոսքն ընտրողներին ներկայացնել:

– Ինչո՞ւ առանց Լեւոն Տեր-Պետրոսյանի. նա Հայ ազգային կոնգրեսի համագումարում ելույթ է ունեցել եւ շատ մանրամասն վերլուծել խաղաղության ծրագիրը՝ «խաղաղություն, հաշտություն, բարիդրացիություն» կարգախոսով: Նա օրեր առաջ հեռուստատեսությամբ հանդես եկավ եւ դարձյալ հանդես կգա քարոզարշավի շրջանակներում:

– Թիվ 12 ընտրատարածքում «Կոնգրես-ՌԺԿ» դաշինքը ներկայացրել է 8 թեկնածու: Որքանո՞վ է մրցունակ ձեր թիմը:

– Մեր մրցունակությունը մեր գաղափարի մեջ է, անձերի միջոց պայքարի դաշտ մենք չենք մտնում: Թիվ 12 ընտրատարածքի մեր թիմն ընդհանրական է՝ համախմբված մեկ խմբի շուրջ, այն է՝ խաղաղության հաստատումը հասարակական պահանջի վերածելը: Քարոզարշավի ընթացքում մարդկանց չենք ասում՝ քվեարկեք այսինչ անձի օգտին, պարզապես ասում ենք՝ ընտրեք N 5 քվեաթերթիկը եւ նպաստեք խաղաղության հաստատմանը:

– 1996-98թթ. եղել էք Սյունիքի մարզպետի տեղակալ եւ պարտականությունների կատարման առումով անզերազանցելի նշանող սահմանել: Այդ ամենով հանդերձ՝ ո՞ր տարածաշրջանից ավելի մեծ ընտրազանգված ունենալու ակնկալիք ունեք. ենթադրում եք՝ Մեղրու տարածաշրջանից՝ հաշվի առնելով Ձեր ծագումը:

– Շնորհակալ եմ գնահատականի համար: Թերեւս Մեղրու տարածաշրջանում իմ դեմ ամենակատիվ են գործում: Իհարկե, այս փաստը ցավով եմ արձանագրում: Փոքր տարածք է, բոլորին ճանաչում եմ՝ համագյուղացի, հարեւան, բարեկամ, ընկեր... Ժամանակի ընթացքում բոլորին փորձել եմ վախեցնել եկամտուրի գրկելու սպառնալիքով: Մեղրիում, Կապանում, հատկապես Քաջարանում ու Ագարակում համատարած հանրապետականացում է եղել՝ կամ հանրապետական դառնալու, կամ աշխատանքից ազատվելու պայմանով: Երկուսն ասած՝ ձայների հետեւից չեմ ընկնում, իմ առաքելությունն է համարում խաղաղության ծրագիրը տարածել, չեմ բացառում, որ Վայոց ձորի մի հեռավոր գյուղում իմ համախոհը կունենան: Բայց երջանիկ կլինեմ, որ մեր դաշինքին տրված ձայները կրկնակի, եռակի անգամ գերազանցեին թեկնածուներին տրված ընդհանուր ձայներից: Սա կվկայեր ընտրողներին

բարձր գիտակցության մասին:

– Քարոզարշավի շրջանակներում կհասցնե՞ք լինել թիվ 12 ընտրատարածքի բոլոր բնակավայրերում:

– Թիվ 12 ընտրատարածքի մեր դաշինքի աշխատանքների համակարգման պատասխանատուն եմ եւ սկզբունքն այսպես եմ մշակել. ամեն վարչական տարածքից ծագումով մեկ թեկնածու ունենալ, ով կլինի նաեւ այդ նախկին վարչական տարածքի հիմնական պատասխանատուն, եւ ես ինձ թույլ չեմ տալիս սահմաններ խախտել: Կապանն իմ նախկին ընտրական տարածքն է եւ այստեղ, ինչպես նաեւ Մեղրիում, շատ ներկայացուցիչներ չունենք, դրա համար Կապանն ու Մեղրին համատեղ ենք անում: Եթե որեւէ վարչական տարածքի պատասխանատու կզգա իմ կարիքը, անպայման օգտակար կլինեն:

– 2012թ. Աժ ընտրություններում քանի՞ ծայն եք հավաքել:

– Չեմ հիշում, թե քանի ծայն եմ հավաքել, հիշում եմ, որ ընտրագրավս հետ եմ ստացել, այսինքն՝ որոշակի չեմ հաղթահարել եմ:

– Այս օրերին տարբեր սոցիոլոգիական հետազոտություններ են անցկացվում, որոնց, իհարկե, որոշակի վերապահումով ենք մտնում: Ինչպե՞ս եք գնահատում Ձեր դաշինքի հնարավորություններն առաջիկա ընտրություններում:

– Համատարած վախի մթնոլորտում ամեն ինչ շատ թողարկված է, նույնիսկ եղբայրը եղբոր հետ չի կիսվում: Կարող եմ ասել, որ իմ պատահական անհատական հանդիպումները ցանկացած մեկի հետ շատ հետաքրքիր են անցնում, մարդիկ անկեղծանում են, ընկալում իմ ասածը, վերցնում նյութերը եւ նույնիսկ առանց ուսումնասիրելու ասում, որ խաղաղության կողմնակից եմ: Իսկ միանգամից երկու հոգու հետ հանդիպման ընթացքում նրանցից մեկն անպայման խոյս է տալիս՝ հավանաբար մտածելով, որ մյուսը կմատուցի: Այս մթնոլորտում կանխատեսումներ անելն անշնորհակալ գործ է:

– «Գելափ»-ի ուսումնասիրություններով Հայաստանի կոմունիստական կուսակցությունը եւ Կոնգրես-ՌԺԿ-ն այս ընտրություններում չեն կարողանա հաղթահարել անցողիկ չենք:

– Ի սկզբանե այն համոզման եմ եղել, որ վիճակագրությունը կանխատեսելի եւ ճիշտ է ազատ, քաղաքացիական հասարակությունում: Մեզ անում այդ բոլորն ընտրական քարոզչական հնարքներ են, որոնց ամենեւին պետք չէ ուշադրություն դարձնել: Մեր դաշինքը թերեւս միակ ուժն է, որի գլխավոր նպատակը ոչ թե իշխանության գալն է, այլ խաղաղության հաստատումը: Արդյո՞ք կարծում եք, որ ամեն օր սահմանից վատ լուրի սպասող հայրերն ու մայրերն իսկապես չեն գիտակցում խաղաղության անհրաժեշտությունը: Եթե ժողովուրդը խաղաղության ծրագրին ձայն չի տալու, ուրեմն գնում ենք կործանման:

– Լեւոն Տեր-Պետրոսյանն ասում է. «Հայաստանում ճշմարտության երեսին ուղիղ նայող ու-



ԱՅՑԵԱՐՏ

Ծնվել է 1960թ. Սյունիքի մարզի (Մեղրու շրջան) Կարծեւան գյուղում: 25 տարեկանում նշանակվել է Կարծեւանի պետական տնտեսության տնօրեն: 1990թ.՝ դեռեւս խորհրդային իշխանության պայմաններում եւ Հայաստանում հողի սեփականաշնորհումից մեկ տարի առաջ, սեփական նախաձեռնությամբ Կարծեւանում, ըստ էության, իրականացրել է հողի սեփականաշնորհում: 1991թ. նշանակվել է Մեղրու ԵԳ բաժնի պետ՝ շրջանի պաշտպանությունը համակարգելու եւ տեղում բանակի կազմավորման աշխատանքներին աջակցելու լիազորություններով: 1995թ. ընտրվել է ՀՀ Աժ պատգամավոր: 1996-1998թթ. աշխատել է Սյունիքի փոխմարզպետ: 1999-2000թթ. եղել է «Հայաստանի» գլխավոր տնօրեն: 2008թ. նախագահական ընտրություններում եղել է Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտրական շտաբի անդամ: Նախկին քաղբանտարկյալ է. 2008թ. մարտի 1-ին ձերբակալվել է, շինծու մեղադրանքով դատապարտվել 3 տարի ազատազրկման, ազատ է արձակվել 2009թ. հունիսի 22-ին: Անկուսակցական է: Ամուսնացած է, ունի 3 երեխա:

րիշ ուժ չկա: Եթե մենք էլ մյուսների պես լռենք, ողջախոհության ճրագը մեր երկրում վերջնականապես կմարի»: Այս խոսքերից կարելի՞ է ենթադրել, որ միակ իրական ընդդիմադիր քաղաքական ուժը ձեր դաշինքն է:

– Կարող եմ մի բան ասել՝ խաղաղության թեմայով համեմելով: Բոլոր այն քաղաքական ուժերը, որոնք Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի իշխանության մաս են կազմել, իրավունք չունեն խոսել Հայաստանը զարգացնելու ճանապարհով՝ ուժի դիրքերից Ղարաբաղի հակամարտության խնդիրը լուծելու մասին. այդ թեման սպառված է: Սա վերաբերում է նաեւ բոլոր նրանց, ովքեր մտքներում «հերք են կանգնել» Հանրապետական կուսակցության հետ կապիցիա կազմելու համար:

– «Կոնգրես-ՌԺԿ» դաշինքը շատ մեծ գաղափար է առաջ քաշում, ցավոք սրտի, մինչ օրս խաղաղության գիծը չենք գիտակցում:

– Ընդհանրապես դա գրագիտության պակաս է: Մի օրինակ բերեմ՝ Ֆաշիստական Գերմանիան եւ Ճապոնիան, որոնք գրեթե բոլոր ժամանակներում աշխարհակալական ձգտումներ են ունեցել, բախվելով աշխարհակարգին, փոխեցին իրենց դիրքորոշումը: Ըստ էության խաղաղությունը մտածելակերպ է, եւ այս երկու պետությունը, բավարարվելով եղած տարածքներով, արժեւորելով մարդուն, նրա իրավունքներն ու ազատությունները, կառուցեցին այնպիսի ժողովրդավարական պետություններ, որոնք համաշխարհային մակարդակի առաջատար դոմորներ են, այսինքն՝ բավարարում են իրենց ազգաբնակչության երջանիկ կյանքը ու նաեւ օգնում ուրիշներին: Մենք երկու միլիոնով կարո՞ղ ենք դեմ գնալ աշխարհակարգին: Ղարաբաղի հակամարտության կարգավորման առումով չկա ոչ մի գերտերություն, որը կսպասարկի մեր

# ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ. «Այսօր էլ համոզված եմ՝ հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը փեղի ունեցավ Մեդրին գիջելու գնով Ղարաբաղի հարցի լուծման փարբերակը մերժելու պատճառով»

Եջ 2 — Երբ սնացանք, որ Արամ Սարգսյանն առաջադրվել է «Ելք» դաշինքի կողմից թիվ 12 ընտրատարածքում, շատերս ուրախացանք, քանզի Ձեր գերդաստանը համարում ենք նաև Սյունիքինը, որովհետև Վազգեն Սարգսյանին իսկապես մերն ենք համարել ու համարում, նա Սյունիքում է գործել բավականին տեսական ժամանակ, մնալուն գործեր արել: Ի՞նչ դրդապատճառներ ունեցաք, որ հենց Վայոց ձորն ու Սյունիքն ընդգրկող N12 ընտրատարածքում առաջադրվեցիք:

— Իհարկե, հարազատության զգացում կա, չգիտեմ՝ դա կապված է եղբորս գիտակցական կյանքի լուրջ մասի՝ Սյունիքի տարածաշրջանում գործելու, թե՛ իմ գործունեության հետ, բայց մեր ընտանիքի՝ ավագ եղբորս եւ իմ ճակատագրի հիմնական ուղղությունները տարբեր առումներով խաչվել են Սյունիքի մարզի հետ: Եղբայրս իր գործակալ, հրապարակախոսական, լրագրողական գործունեությունը «Գարուն» ամսագրում սկսել է Մեդրին մասին հողվածով, վերնագիրը եթե չեն սխալվում՝ «Յայի վերջին խելքը»: Դրանից հետո, երբ պաշտպանության նախարար էր, գտնում էր, որ Ղարաբաղի թիկունքը, Ղարաբաղին առաջին օգնություն ցուցաբերողը, առաջին ձեռք մեկնողը եւ այդ օգնությունը տեղ հասցնողը Սյունիքի մարզն է: Եվ Վազգենն այստեղ հինք դրեց՝ Արցախին առաջին օգնությունը հասցնելու հարցում, եւ Սյունիքը դարձավ իր աջ ձեռքը բոլոր առումներով: Այնուհետեւ Վազգենը դարձավ Հայաստանի Հանրապետության պետախարար Սյունիքի հարցերով: Ըստ ամենայնի դա տարածքային իշխանության կարգավիճակ էր, նույնիսկ մի բան էլ ավելի: Շատ ուրախ եմ, որ Սյունիքի մարզում եղբորս հիշատակը տակավին թարմ է, գնահատում են նրան: Եվ նախընտրական այս հանդիպումներին նրա մասին բոլորն էլ դրական են արտահայտվում:

Ամենակարեւորի մասին եմ ուզում ասել, որ կապված է եղբորս կյանքի ավարտի հետ: Այսօր էլ համոզված եմ՝ հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը տեղի ունեցավ Մեդրին գիջելու գնով Ղարաբաղի հարցի լուծման տարբերակը մերժելու պատճառով: Այդ ոճրագործությանը զոհ գնաց նաև Կարեն Դեմիրճյանը. երկուսով դեմ էին այդ տարբերակին: Դրանից անմիջապես հետո Հայաստանի հանրապետական կուսակցության երկրապահ կամավորների միության խնդրանքով ստիպված էի մտնել եղբորս աթոռին, ինչը շատ դժվար էր. թշմառու անգամ չեմ ցանկանա մնալ վիճակում հայտնվել: Բայց հասկացա, որ հարազատի կորցնելուց հետո ոչ թե վրեժխնդրությամբ պիտի լցվես, այլ շարունակես նրա կիսատ թողած գործը: Այն ժամանակ Ազարակ քաղաքի հրապարակում, բազմաթիվ լրագրողների ներկայությամբ, նաև «Հայլուր» ծրագրով հայտարարեցի, որ գոյություն ունի այդպիսի տարբերակ (Մեդրին), որին որպես վարչապետ դեմ եմ, եւ քանի վարչապետ

եմ, այդ տարբերակը չի գործելու: Լավ պատկերացում էի, որ իմ այդ հայտարարությունն այնքան էլ անվճար չէ, անվտանգ չէ: Բայց դա պարտավոր էի ասել Վազգենից հետո: Դրանից հետո իմ գործունեությունը թե՛ մտավոր, թե՛ կատարած գործերի առումով մի կարելուք ժամանակահատված այս մարզին էր նվիրված: Առաջինը՝ կառավարության արտագնա միստ նախաձեռնել եւ անցկացրել եմ մարզկենտրոնում Կապանում: Կառավարությունը դուրս էր եկել իր նստավայրից, գնացել տարածաշրջան, որտեղ մարզի բնակիչներն իրենց հուզող հարցերն էին ուղղում հանրապետության վարչապետին, նախարարներին: Կառավարության բոլոր անդամներին՝ իրենց մեքենաներով տարել եմ հանրապետության ամենահեռավոր, հարավային գյուղը՝ Նյուվաղի (այժմ՝ Նոնաձոր): Հետո բողոքեցին, թե մեր մեքենաները կոտրվեցին դարուփոսերի մեջ: Բայց չէի կարող նախարարներին ցույց չտալ, թե որտեղից է սկսվում Հայաստանը:

### — Օրակարգում, որքանով հիշում ենք, նաև Ազարակի պղծամոլիքներնային կոմբինատի վերագործարկման խնդիրն էր այն ժամանակ:

— Այդպես է, բայց դրանից առաջ Ձանգեզուրի պղծամոլիքներնային կոմբինատի գործունեությունն էլ վտանգված էր: Այն տեխնիկական հագեցվածության առումով լուրջ խնդիրներ ուներ, որովհետև նյութական միջոցներ չուներ արտադրությունը թարմացնելու: Կոմբինատի արտադրանքը վաճառում էր՝ ով ասես, բացի կոմբինատի ղեկավարությունից: Եվ, «ով ասես» վաճառողներին հովանավորում էր հանրապետության այն ժամանակվա գործող նախագահը, ով էլ հայ օլիգարխներից մեկի հետ «Մաքուր երկաթ» կոչվող ձեռնարկությունում մոլիքներին հովանավորում էր ստանում: Մի խոսքով, թույլ չէին տալիս, որ կոմբինատը սեփական միջոցներ ունենա: Այս թեման քննարկեցի Մաքսիմ Հակոբյանի հետ եւ արգելեցի որեւէ միջնորդի կողմից խտանյուրը վաճառելը՝ այդ հնարավորությունը տալով կոմբինատի տնօրենին: Նաև իմ ու «Արարատցիներին» գլխավոր ինժեների եւ Մաքսիմ Հակոբյանի համագործակցությամբ Քաջարանում դրվեց Ֆերոմոլիքների երկու վաճառք: Եվ այն շահույթը, որ գնում էր «Մաքուր երկաթ» ընկերությանը, մնաց կոմբինատին: Դրա շնորհիվ կոմբինատը ոտքի կանգնեց ու փրկվեց սնանկացումից: Ստեղծվել էր մի վիճակ, որ կոմբինատով հարստանում էին բոլորը, բացի կոմբինատից: Նաև խոստացել էի Ազարակի կոմբինատը վերագործարկել: Լուրջ ծախսեր էին անհրաժեշտ, իսկ կառավարությունը եւ վարչապետի հիմնադրամն այդքան գումար չուներին, առավել եւս հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո մարդկանց հավատը կորել էր, բյուջեի մուտքերը սակավ էին: Ձանգեզուրի պղծամոլիքներնային կոմբինատն էլ օգնեց, որ միասին վերագործարկեք Ազարակի կոմբինատը: Խոստումն տալուց յոթ օր հետո

կոմբինատը սկսեց աշխատել:  
— 2008-ի ընտրությունների ժամանակ այլ դաշինքով էիք, մարդիկ հետաքրքրված են, թե հանրապետության հիմնադիր նախագահի հետ դաշինքն ինչու՞ չարունակություն չունեցավ:

— Բազմաթիվ անգամներ եմ այդ հարցին պատասխանել: Ինձ համար քաղաքականությունն ունի զաղափարական լուրջ տրամաբանություն: Ինձ համար քաղաքականությունն ինքնամպատակ չէ, համարում եմ, որ քաղաքականությունը բարոյականություն է պահանջում, եթե անկեղծ ես քո ժողովրդի առաջ:

Հանրապետության առաջին նախագահը հանրապետության զարգացման ուղիները եւ մոտեցումներն ամբողջությամբ տեսնում էր եվրասիական մոդելի մեջ: Մշտապես դրա կողմնակիցը չեմ եղել: Համոզված եմ, որ տնտեսության մեջ ներդրումներ անելու նպատակով Հայաստանի իշխանությունները դիմում են Արեւմուտքին, գնում են Եվրոպա՝ Եվրասիական միության անդամ լինելով: Մի օրինակ բերեմ. Վրաստանում անցած տարի 2 մլրդ դոլարի ներդրում են արել, Հայաստանում՝ 192 մլն դոլարի՝ պատկերացնում եք, եթե Հայաստանում երկու միլիարդ դոլար ներդրվե՞ր՝ սոցիալական ու բարոյահագեցման կանխիկներ:

Երկրորդ՝ մեր իշխանություններն էլ ասում են, որ Եվրասիական միության մեջ մտնելով՝ մեր երկրի անվտանգությունն են ապահովում: Մինչդեռ ապրիլյան պատերազմը եւ Հայաստանի սահմանում տեղի ունեցած դեպքերը (վերջին դեպքը՝ Տավուշում), զալիս են ապացուցելու, որ անվտանգությունն են ապահովում: Դա ինձ համար ի սկզբանե ակնհայտ էր, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանը կարծում էր, որ մենք դատապարտված ենք Եվրասիական միության մեջ լինելու եւ չենք կարող այլընտրանք ունենալ: Քաղաքական առումով ես այդ մոտեցման կողմնակից չեմ, չեմ եւ հիմա էլ եմ կարծում, որ այդպես չէ: Որովհետեւ Արեւմուտքում ֆինանսական միջոցներ կան, Արեւմուտքն ու Եվրոպան Վրաստանում ներդրումներ են անում՝ իմանալով, որ Վրաստանն ասոցիացման համաձայնագիրը ստորագրած երկիր է, եւ այդտեղ ներդրված գումարներն ապահովագրված են Եվրոպական բանկերի միջոցով, իսկ Եվրասիական միությունը որեւէ երաշխիք չի տալիս, ինչի համար այստեղ փող չեն ներդնում:

Երրորդ՝ մտավոր հաշվարկներով վերջին ութ տարում տասը միլիարդ դոլար դուրս է տարվել Հայաստանից: Եվ այդ գումարի առյուծի բաժինը դուրս է եկել ոչ թե Ռուսաստան, այլ Եվրոպա, որովհետեւ այդ փողը Ռուսաստան տանելու վստահությունը չուներ: Մտավախություն ունեն, որ Ռուսաստանում այդ փողը կկորցնեն:

Մեծ քննարկում ենք, թե ինչ մոդել ենք ուզում: Եթե Եվրոպայում ավելի ապահով է, եթե Եվրոպական կրթական եւ առողջապահական համակարգերն ավելի առաջադեմ են, օգտագործում ենք իրենց

դեղամիջոցները, բուժվում Եվրոպայում, ապա նախապատվությունը պիտի տանք Եվրոպական մոդելին: Առավել եւս անվտանգության հարցն էլ լուծվում է այդպես:

Չորրորդ հարցը կապված էր այսպես կոչված հրաշալի եռյակի կամ քառյակի հետ, ինչի մասին ասում էր Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ես մշտապես կարծիքն եմ եղել, որ ճիշտ չեն այն ուժերը, ովքեր մարտի 1-ից հետո, երբ տասը մարդ զոհվեց, գնացին նախագահական նստավայր եւ ասացին՝ մեզ երեք նախարարական պորտֆել տվեք: Այս հանգամանքը մեզ համար վիրավորական էր. հայտնեցի, որ չեմ մասնակցի նման գործարքի: Իմ ամբողջ քաղաքական գործունեության ընթացքում բազմաթիվ դեպքեր են եղել, որ ես սխալ եմ եղել, բայց ժողովուրդն ասել է՝ այս մարդն ազնիվ է, մեր ընկերն է՝ անկախ նրանից՝ ճիշտ է անում, թե սխալ: Բայց երբ ընդդիմությունն էլ իշխանության նման ամեն գնով պատրաստ է իշխանության հասնելու կամ իշխանությունը պահելու, այդ դեպքում ինչ տարբերություն իշխանության եւ ընդդիմության միջև: Իրենք դառնում են նույնը, դա ամենամեծ վնասն էր, որ հասցվեց Հայաստանի ընդդիմությանը, ինչի պատճառով այսօր բացակայում է հավատը ընդդիմության հանդեպ: Կարծում եմ՝ մեղավորը եռյակ-քառյակ ձեւավորումներն էին, որոնք ընդդիմադիր հանրությանը համոզեցին, որ քաղաքականությունն անբարոյականություն է...

### — Երեք քաղաքական ուժ՝ «Լուսավոր Հայաստան», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները միացան՝ համաձայնության գալով՝ համատեղ քաղաքական գործունեություն ծավալել: Մի քանի խոսք «Ելք» դաշինքի մասին:

— Ինձ համար քաղաքական գործունեությունը, պետությունը, ընտանիքը մոդելներ են, որոնք իրար շատ նման են: Համարում եմ, որ «Ելք» դաշինքն ընտանիքի նման է, որտեղ կան ընտանիքի տարեցներ եւ երիտասարդներ, շատ ավելի երիտասարդներ, եւ այդ ներդաշնակությունը կա: Երբ որ չկան որոշակի տարեցներ, այդ ընտանիքի մանուկները մեծանում են առանց ծնողների ջերմության, որն անընդունելի է: Ճիշտ է, իրենց տեղը գտնում են կյանքում, իրենց գլուխը պահում են: Բայց լավ է, որ մեծերի հովանու ներքո են մեծանում: Երբ չկան ջախելներ, դա էլ շատ վատ է, քանի որ ծերերը պարփակվում են իրենց հուշերի մեջ, եւ ոչ մի դրական փոփոխություն տեղի չի ունենում: «Ելք» դաշինքը զաղափարապես ճիշտ է կառուցված, չի կարող փլուզվել: Դաշինքի գործունեության ընթացքում ոչ մի կորուստ չենք ունեցել, դաշինքում ոչ մի խժոժություն չի եղել, ոչ մեկը ներսից հայտարարություն չի արել, այլ մեղավոր փեթակի պես աշխատել ենք:

### — Ինչպես երևում է, նախընտրական քարոզարշավի համար նաև աշխատանքի բաժանում եք կատարել:

— Այնպիսի մեխանիզմներ էին մշակվել, որ նախընտրական քարո-

զարշավի առաջին փուլում տարբեր ուղղություններով պիտի աշխատեինք. տարածքը մեծ էր, ժամանակը՝ քիչ, հասցնելու խնդիր կար: Արարատից մինչեւ Ազարակ ինքս եմ այցելություններ կատարում, մյուս ուղղությամբ՝ Էդմոն Մարուքյանը՝ մայրաքաղաքից մինչեւ Նոյեմբերյան, Երեւանում Նիկոլ Փաշինյանն է քարոզարշավ իրականացնում, Գեղարքունիքի մարզում, Հրազդանի տարածաշրջանում՝ Սասուն Սիքախյանը: Քարոզարշավի ամրապնակ փուլը համարում էինք հանրությանը ներկայանալու փուլ, որ մարդիկ տեղեկանային «Ելք» դաշինքի մասին, իմանային ովքեր են ներկայացնում դաշինքը, եւ նախորդ այցելությունն Սյունիքի մարզ այդ նպատակին էր ուղղված: Առաջին այցը շատ ոգեւորեց ինձ այն առումով, որ ոչ միայն դաշինքն են ճանաչում, այլեւ հիմնադիրներին մեկ-մեկ գիտեն: Համարում եմ, որ քարոզարշավի առաջին փուլի աշխատանքը մեղավոր փեթակի աշխատանք էր: Եթե ամենահեռավոր գյուղում գիտեն «Ելք» դաշինքի մասին, դա քրտնաջան աշխատանքի մասին է խոսում: Կան քաղաքական ուժեր, որոնք տարիներ ի վեր գործում են, բայց ժողովուրդը նրանց չգիտի: «Ելք» մի երեք ամսվա ձեւավորված դաշինք է՝ նոր անունով, նոր տարբերանշանով, արդեն ճանաչում են, եւ նույնիսկ ոմանք սպասելիքներ ունեն: Երկրորդ փուլում արդեն երեքով կշռազայեմք ողջ Հայաստանում:

### — Պարոն Սարգսյան, «Հայկական ժամանակ» թերթի մարտի 16-ի համարում կարդացինք՝ հետընտրական շրջանում չի բացառվում, որ «Ելք» իշխանությունը մեծամասամբ կարողանա կրկին հետ մղել Վազգենի հետ: Որքանով է հավաստի այդ տեղեկատվությունը:

— Նախ՝ հետընտրական շրջանի մասին: Այդ դեպքում գործում է երկու տարբերակ: Առաջին տարբերակով արդար ընտրություններից հետո յուրաքանչյուր ուժ, քանի տոկոս հավաքել է, համարում է, որ արդար է, շնորհավորում է հաղթող ուժին, եւ հանրությունն ինչ քանակությամբ քվե իրեն տվել է, այդ քանակությամբ քվե ունենալով՝ գնում է Ազգային ժողով՝ իր պարտականությունները կատարելու:

Երկրորդ տարբերակը հետեւյալն է՝ եթե խախտումներով անցնեն ընտրությունները, ընդ որում՝ կոպիտ խախտումներով, ապա տեղի կունենան հետընտրական գործընթացներ: Այն մարդիկ, ովքեր դժգոհ են լինում ընտրության արդյունքներից, համարում են, որ իրենց քվեն կեղծվել է, իսկ նրանք կարող են լինել իշխանական ուժերից մինչեւ ծայրահեղ ընդդիմադիրներ, գնում են ոչ այն վայրը, որտեղ բողոքում են ընտրություններից, դիցուք, Ազատության հրապարակ: Այդտեղ արդեն հանրությունն է որոշում, թե այդ մարդուն թողնի՞՞ գա հրապարակ, թե՛ չթողնի: Փորձը ցույց է տալիս, որ նման դեպքերում հասարակությունը միշտ միավորվելուն կողմ է լինում, որովհետեւ համար մեկ թիրախը տեսնում է խախտող ուժին: Ես տեսել եմ, որ մարդիկ բա-



# Խորհրդի նիստի Գործիսի պետական համալսարանում

Փետրվարի 24-ին Գործիսի պետական համալսարանում տեղի ունեցավ կրթության կառավարման խորհրդի նիստի, որի օրակարգում Գործիսի պետական համալսարանի խորհրդի նախագահի ընտրության, ԳՊՀ-ի ղեկավարի 2015-16 ուստարվա գործունեության հաշվետվության և 2017թ. եկամուտների ու ծախսերի նախահաշվի հաստատման, ինչպես նաև «Գործիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը «Գործիսի պետական համալսարան» հիմնադրամի վերակազմակերպելու հարցերն էին:



«Գործիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի նոր կազմը հաստատվել էր 33 վարչապետի 2017թ. փետրվարի 3-ի N 87 – Ա որոշմամբ: Նիստում, որը նախագահում էր 33 կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետի տեղակալ Ս.Սիմոնյանը, խորհրդի նախագահի թեկնածու առաջադրվեց ԳՊՀ խորհրդի անդամ, Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, ով էլ փակ (զաղտնի) քվեարկության արդյունքով ընտրվեց վերոնշյալ պաշտոնում:

Բյուջեների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Դուկասյանը հանդես եկավ Գործիսի պետական համալսարանի 2015-2016թթ. ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների և 2017թ. եկամուտների ու ծախսերի նախահաշվի հաստատման հիմնական ցուցանիշների մասին հաշվետու զեկուցումով: Ուստարվա ամփոփեց բուհի նախընթաց ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական տարիքի միաժամանակ մատնանշելով 2017թ. խնդիրները, ծրագրերն ու անելիքները:

վածքին, ռեկտորն անդրադարձավ համալսարանի ուսումնամեթոդական գործունեությանը, դրա կազմակերպման ու կատարելագործման խնդիրներին, ուսանողական համակազմի աճման ու նվազման ցուցանիշներին, ուսումնական բեռնվածությանն ու հաստիքներին:

Ֆինանսական կայունացման, բուհի միջազգայնացման և այլ ուղի- փոփոխությունների, մասնագիտությունների վերալիցենզավորման, նոր մասնագիտությունների ներդրման, ուսումնական գործընթացի բարելավման, ներքին իրավական դաշտի կարգավորման, ֆինանսական կայունացման, բուհի միջազգայնացման և այլ ուղի-

փոփոխության անհրաժեշտությունը, նպատակները, առավելությունները: «Վերակազմակերպելու արդյունքում հիմնադրամը կունենա լայն հնարավորություն ավելի ծկուն, ազատ, ռացիոնալ, արդյունավետ օգտագործելու իր գույքը, ներգրավելու արտաքին ներդրողների՝ ի նպաստ կրթության ու գիտության գարգացման: Զգալիորեն կավելանան հիմնադրամի կողմից պետական բյուջե մուծվող հարկերը: Պետությունը կպահպանի հիմնադրամին օգտագործման իրավունքով հանձնված գույքի ճիշտ, նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավունքը՝ պահպանելով նաև օրենքով նախատեսված կրթության ֆինանսավորումը պետական բյուջեից: Հիմնադրամն ինքն է սահմանում ձեռնարկատիրական գործունեության այն տեսակները, որոնցով կարող է զբաղվել, իսկ ՊՈԱԿ-ի դեպքում այդ ցանկը հաստատում է 33 կառավարությունը», - նշեց ռեկտոր Ա.Դուկասյանը և հավելեց, որ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ երկրների դրական փորձը, որտեղ բուհերը հիմնականում գործում են հիմնադրամի կարգավիճակով՝ պետության ու հասարակության առջև պատասխանատվությամբ ու հաշվետվողականությամբ:

Պատմական համառոտ անդրադարձ կատարելով բուհի 50-ամյա ուղուն, հիմնական ձեռքբերումներին, կառավարմանն ու կառուց-

րի տեղաբաշխմանը, ուսանողների ակադեմիական առաջադիմությանը, գործող մասնագիտությունների վերալիցենզավորման ու նոր մասնագիտությունների լիցենզավորման խնդիրներին, գիտահետազոտական գործունեությանը, կրթության որակի ապահովմանն ու կարիերայի զարգացմանը, հասարակայնության հետ կապերին, բուհի միջազգայնացմանը, ֆինանսատնտեսական գործունեությանը և այլ հարցերի: «Հաշվետու ժամանակաշրջանում զգալի աշխատանքներ են կատարվել համալսարանի կառավարման համակարգի կատարելագործման, կառուցվածքային ստորաբաժանումների՝ արդիականության պահանջներից բխող

ղություններով», - նշեց ռեկտորը և հավելեց, որ կրթության որակի բարելավման միջոցով ԳՊՀ-ն նախապատրաստվում է ինտեգրացիոնալ հավատարմագրման գործընթացին: ԳՊՀ-ի ղեկավարի 2015-16 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2017թ. եկամուտների ու ծախսերի նախահաշվի նախագիծը հավանության արժանացան ու հաստատվեցին խորհրդի կողմից: Ռեկտորը խորհրդին ներկայացրեց նաև «Գործիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը հիմնադրամի վերակազմակերպելու օրախնդիր հարցը և «Գործիսի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության նախագիծը՝ հիմնավորելով բուհի ՊՈԱԿ կարգավիճակի

Ըստ գործող կարգի՝ ԳՊՀ-ի խորհուրդը քվեարկությամբ ընդունեց որոշումներ օրակարգի հարցերի վերաբերյալ: Երափախելով նիստը՝ Վ.Հակոբյանը ողջունեց ընթացիկ տարում բուհում իրականացված բարեփոխումները՝ շնորհակալություն հայտնելով համալսարանի ռեկտորին ու աշխատակազմին՝ ծավալուն աշխատանքի համար: **Թ.ՄԱՐԻՔՅԱՆ**

# ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ. «Արցախի հակամարտության կարգավորման ձգձգումը Հայաստանին արյունաքամ է անում»

Հարցազրույց թիվ 12 ընտրատարածքում «Կոնգրես-ՅԺԿ» դաշինքի պատգամավորի թեկնածու Դավիթ Մաթևոսյանի հետ

Ձգտումներն ու ցանկությունները: Եվ այս պայմաններում գնալ աշխարհին դեմ՝ համարելով, որ 1994թ. զինադադարը շատ ապահով հաղթանակ է՝ մոլորություն է, որովհետև իրական հաղթանակն այն է, որ ճանաչում է միջազգային հանրությունը: Ոչ միայն Արցախի սահմանադրությամբ ձևավորված տարածքների, այլև նախկին ԼՂԻՄ տարածքի անկախությունը որևէ երկիր չի ճանաչել, ինչը նշանակում է, որ մեր հարթամակը դեռ սառույցից է գրված: Այս հարցի շուրջ մեր տեսակետն ի սկզբանե եղել է փոխզիջումների գնալը: Չենք ասում՝ ինչ գիջեն, թող գիջեն հնարավոր նվազագույնը, բայց փոխզիջման արդյունքում ձեռք կբերենք խաղաղություն, Արցախի ինքնորոշման հնարավորություն, կայուն ու հուսալի անվտանգություն և գարգանալու հնարավորություն: Արցախի չկարգավորված հակամարտությունը Հայաստանի բաց վերքն է: Արցախի հակամարտության կարգավորման ձգձգումը Հայաստանին արյունաքամ է անում: Օր առաջ սա պետք է գիտակցենք բոլորս, նաև Արցախի իշխանություններն ու ժողովուրդը:

**Իրենց տարածաշրջանում առևտրային կենտրոնների լուծման հնարավոր տարբերակների մասին: Իհարկե, ձեր դաշինքի առաջարկած խաղաղության գաղափարն ամենաարժեքավորն է, և այնուամենայնիվ հատկապես մեր տարածաշրջանի ո՞ր խնդիրների լուծմանը կաջակցեք, կնպաստեք, եթե վստահության քվե ստանաք:**  
– Մեր ծրագիրը միայն խաղաղության հաստատման վերաբերյալ չէ, այն ներառում է բոլոր բնագավառները, բայց խնդիրն այն է, որ առանց խաղաղության հաստատման հնարավոր չէ դրանց լիարժեք իրագործումը: Խաղաղությունը մեզ պետք է թթվածնի պես, ինչը հնարավոր կդարձնի Հայաստանի ներգրավվածությունը տարածաշրջանային խոշոր տնտեսական ծրագրերում: Այդպիսի կարելու մի ծրագիր մենք արդեն կորցրել ենք: Բաքու-Չեյխան նավթամուղն ու Բաքու-Երզրում գազատարը նախատեսվում էր անց կացնել Հայաստանով: Այդ դեպքում նա կդառնար Հայաստանի ու Արցախի անվտանգության ամենակարևոր գործիքներից մեկը: Խաղաղությունից խուսաճվող Հայաստանի իշխանությունները հեզուն էին՝ ասելով, որ Ադրբեջանում նավթի պաշարներ չկան, և այդ նավ-

թամուղը չի կառուցվելու: Հայաստանը շրջանցելու և Վրաստանով կառուցելու համար ծախսվեց մլրդ դոլարը գերազանցող լրացուցիչ գումար: Վրաստանն այդ կառուցմանը տրամադրված տարեկան ստանում է շուրջ 100 մլն դոլար՝ չհաշված նրանց շահագործման բազմաթիվ աշխատատեղերը:  
Հիմա խաղաղության ձգձգման դեպքում կորցնելու ենք Հայաստանով անցնող արդեն 26 տարի չգործող երկաթուղու տրամգիտ նշանակությունը: Այդ երկաթուղին կապում էր Ռուսաստանն Իրանին ու Թուրքիային: Ռոբերտ Քոչարյանը Հորդիզից, Մեղրիով, մինչև Նախիջևան մեկտեղ բանդեց՝ Մինջևան-Կապան ճյուղն էլ հետը, իսկ հետո Մեղրու երկաթուղու մի երկու տասնյակ կիլոմետր հատվածով ջրագիծ է անց կացվել: Մինչդեռ Ադրբեջանն ու Վրաստանն այդ երկաթուղու՝ Հայաստանը շրջանցող Ատարա-Բեշտ (Ադրբեջանից Իրան) և Ախալքալաբ-Ղարս (Վրաստանից Թուրքիա) հատվածներն են կառուցում:

**Թացի վերաբերյալ:**  
– Նախ այդ խոշորացված համայնքի կազմում այլևս ծերացած բնակչությամբ գյուղեր են, բացակայում է վերարտադրող սերունդը: Եվ սրա հիմնական պատճառը տեղական ժամանակ այդ գյուղերում ուժեղ, մրցակցային դպրոցի բացակայությունն է: Մեղրու տարածաշրջանի օրինակով ասենք. բոլոր համայնքները մեկուս միավորելը ճիշտ չէր: Ժամանակի ընթացքում բոլորը ձգտելու են դանդաղ հոսել դեպի համայնքի կենտրոն: Կարելի էր գոն մի հինգ համայնք դարձնել և յուրաքանչյուր համայնքում ձևավորել առանցքային, մրցունակ դպրոց, որի ֆինանսավորումը կախված չի լինի աշակերտների թվից, այլ նպատակին հասնելու քաղաքական որոշումից: Շրջակա ծերացած գյուղերի սակավաթիվ երեխաների տեղափոխելու խնդիրը լուծելով նրանց համար որակավորման մասին կրթություն ստանալու հնարավորություն ստեղծել, թե չէ՝ նրանք էլ են հեռանալու գյուղից: Իշխանությունները համայնքների խոշորացման գործընթացի հիմքում տեսնում են միայն միջոցների խնայողությունը: Ծայրանասեր կղատարկվեն զրո համայնք, զրո ծախս տրամաբանության հետևանքով:  
– **Նոր Ընտրական օրենսգրքում, նաև ՀԱԿ-ի նախաձեռնությամբ, բավականին փոփոխություններ եղան:**  
– ՀԱԿ-ը մշտապես ներկայացրել է օրենսգիրքը փոփոխելու առաջարկություններ. առաջին կետը

մշտապես և այս անգամ նույնպես եղել է 100 տոկոսով դասական համասնական ընտրակարգին անցնելը, ինչի մասին իշխանությունները լսել անգամ չցանկացան: Կարծում են՝ իշխանությունները ընտրությունների այս ձևը հայտնագործելուց հետո են որոշել Սահմանադրության փոփոխությամբ անցում կատարել խորհրդարանական կառավարման: Նոր ընտրական համակարգը մեծամասնականից ավելի վատն է: Ինչ վերաբերում է դրական փոփոխություններին, ապա նախնական պայմանավորվածությամբ՝ քվեարկությանը կարող էր մասնակցել միայն տալը մատի մատնահետք համձնած, նախագրանցված ու համապատասխան նույնականացման քարտ ունեցող ընտրողը: Ժամանակի սղության պատճառաբանությամբ այն փոխարինեցին ընտրությանը մասնակցածների ստորագրված ցուցակների հրապարակմամբ: Ինչ վերաբերում է տեսախցիկների տեղադրմանը, ապա այստեղ նույնպես նախնական պայմանավորվածությունից որոշակի նահանջ արձանագրվեց՝ միջոցների սղության պատճառաբանությամբ. տեսախցիկ կտեղադրվի միայն 750 և ավելի ընտրող ունեցող ընտրատեղամասերում: Մյուսը՝ ընտրողների հաշվառումն է սարքի օգնությամբ, որի վերջնական գնահատականը կարող ենք տալ այս ընտրությունից հետո միայն: Կարծում են՝ առաջընթաց կլինի:  
– **Այնուամենայնիվ որոշակի նորարարություններ**

– **Թեկնածուների հետ հանդիպումների ժամանակ մարդիկ հիմնականում ցանկանում են լսել**

# Տարբեր համայնքին փրամադրվել են շուրջ 167 միլիոն դրամի արտադրական միջոցներ եւ սարքավորումներ

Եջ 1 նպատակով: USAID-ի Աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին ծրագրի շրջանակներում եւ Շվեյցարիայի Համադաշնության կառավարության կողմից՝ ի դեմ Հայաստանում Շվեյցարական համագործակցության գրասենյակի, ֆինանսավորվել եւ ֆինանսավորվելու են նաեւ բազմաբնակավայր Ուրցաձոր, Վայք, Զառիթափ, Գորայք, Մեղրի,

տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում եւ Շվեյցարիայի Համադաշնության կառավարության կողմից՝ ի դեմ Հայաստանում Շվեյցարական համագործակցության գրասենյակի, ֆինանսավորվել եւ ֆինանսավորվելու են նաեւ բազմաբնակավայր Ուրցաձոր, Վայք, Զառիթափ, Գորայք, Մեղրի,



ցիոնալ էքսկավատոր, 1 գրեյդեր: Խոշորացման համատեքստում կազմավորված համայնքների ներուժը մեծացնելու նպատակով Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության կողմից՝ ի դեմ USAID-ի (ԱՄՆ ՄՁԳ) «Աջակցություն

Տեղ, Զերնուկ, Նոյեմբերյան, Կոթի, Այրում, Ամասիա, Աշոցք, Արփի, Սարապատ համայնքներում ներկայացված ներդրումային ծրագրերը:

mtad.am  
16.03.2017թ.

## Հնորիվ հնարավոր է գոնե ընտրատեղամասերում կեղծարարությունը նվազագույնի հասցնել:

Մեղրու տարածաշրջանում ներքին կարգով, հավատարիմ անձանց միջոցով բացակա մարդկանց հաշվառում են կատարել: Չնայած այդտեղ բնակչության կենսամակարդակը բարձր է, բայց այդտեղից նույնպես լուրջ արտագաղթ է եղել: Հավատացնում են՝ եթե բացակայողների փոխարեն քվեարկեն, ապա մինչև վերջ հետամուտ կլինեն, եւ այդ մարդիկ պատասխանատվության առաջ կկանգնեն:

Իսողողության ձեր թանկ գաղափարը ոչ բոլորի կողմից է լիարժեք ընկալվում. ո՞ւմ էք ձեր քաղաքական հենարանը համարում:

Բոլոր գիտակից մարդկանց: Անհատական շփումներից պարզորոշ երևում է, որ մեզանում վախճում ու գիտակցությունը պայքարի մեջ են. տեսնենք՝ որը կհաղթի:

Ինչպե՞ս էք զննատուր մատչելի դարձնում:

Նախ ասեն, որ վարչական ռեսուրսի գործադրման անմախաղեպ մասշտաբներ են տեսնում՝ համատարած վախճում մթնոլորտ է: Ընտրական շառքի մասին նույնպես խոսում են, բայց դա սովորաբար վերջին օրերին է տեղի ունենում: Միևնույն ժամանակ համատարած ատելություն կա գործող իշխանության նկատմամբ: Ըստ Սահմանադրության՝ իշխանությունը պատկանում է ժողովրդին, եւ նա իշխանություն ձեւավորում է ազատ ընտրություններով: Բայց քանի դեռ ընտրություններն ազատ չեն, ապա յուրաքանչյուր ընտրող իշխանության կողմ է քվեաբերիկ ստանալուց մինչև քվեարկություն կատարելու պահը միայն: Եթե այդ

կարճատեւ իշխանությունը փոխանցեց վախճ ազդեցության տակ՝ ոչինչ չի փոխվի, եթե գիտակցաբար, ապա դրական փոփոխություններն անխուսափելի կլինեն:

Դուք կոչ եք անում մարդկանց առաջնորդվել գիտակցությամբ, բայց չենք կարող չարձանագրել, որ համատարած արտագաղթի պայմաններում, ցավոք, երկրից հեռացել եւ հեռանում են նաեւ լավագույնները, մարդկանց ըմբռնող հատվածը:

Այն, ինչ անում են այս իշխանությունները մեր ժողովրդի գլխին, նույնիսկ զարմանալի է, որ գիտակցություն ունեցող այսքան մարդ է մնացել մեր երկրում: Մի առիթով ասել են. ապրիլյան դեպքերից հետո գոնե իշխանությունները պետք է զննահատել կարողանային մարդկանց:

Եթե այս ընտրապայքարում չհաղթեք, ի՞նչ ճակատագիր է սպասվում ձեր գաղափարին. չէ՞ որ ինը քաղաքական ուժից միայն դուք եք խաղաղության դրոշմ վերցրել:

Կհամարեն, որ մասնակցել են ողջամտության կրակը վառ պահելու գործընթացին: Ամեն դեպքում որեւէ բան հենց այնպես չի կարող կորչել: Հնարավոր է՝ բարդ պատասխանատվություն ենք ստանձնել, բայց սրանով կաղանջավորվի խաղաղություն հաստատելու հասարակական պահանջը: Մարդիկ վերջին հաշվով մի օր կհասկանան: Ի՞նչ կարծիքով այսպես շատ ավելի լավ կլինի, եթե մենք ազգովի ողջամտություն ցուցաբերենք եւ գիտակցված խաղաղություն հաստատենք օր առօր: Ինձ շատ նվաստացած կզգամ, եթե մի օր պարզվի, որ մեզ խաղաղություն են պարտադրել:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# «Հայոց արծիվները» հարազատ են Սյունիքին, քանի որ այն սկիզբ է առնում Սյունյաց լեռնաշխարհից

2017թ. մարտի 4-ին մայրաքաղաքի «Մոսկվա» կինոթատրոնի դահլիճում փեդի ունեցավ հանդիսություն՝ նվիրված «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության ծննդյան եւ գործունեության 14-րդ տարեդարձին:

ՀՀ պետական հիմնի հնչյունների ներքո մեկնարկած հանդիսավոր միջոցառման մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության սահմանները պաշտպանած ու նահատակված քաջերի հիշատակը:

Այնուհետեւ ներկայացվեց «Հայոց արծիվներ»-ի անցած ուղին՝ փաստավերագրական ֆիլմի միջոցով, որ կրում էր «Ազգ, հայրենիք, պետականություն» խորագիրը:

«Հայոց արծիվներ» կազմակերպության ծննդյան եւ գործունեության 14-րդ տարեդարձի առիթով շնորհավորական ուղերձ էր հղել Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, որն ընթերցեց ՀՀ նախագահի օգնական Ավետիս Բերբերյանը:

ՀՀ նախագահը, միաժամանակ, պետական պարգևով եւ շնորհակալագրով պարգևատրել էր կազմակերպության խորհրդի մի քանի անդամի:

Կազմակերպության մի խումբ ներկայացուցիչների հուշամեդալով ու շնորհակալագրով պարգևատրել էր Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանը:

«Հայոց արծիվներ»-ազգային բանակ կապը եղել է մնում է կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններից մեկը: Այդ համագանքը հաշվի առնելով է, որ ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը կազմակերպության մի խումբ անդամների պարգևատրել էր ՀՀ ՊՆ մեդալներով, որը խրախուսվածներին հանձնեց ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արա Նազարյանը:

«Հայոց արծիվներ»-ի ծննդյան եւ գործունեության 14-րդ տարեդարձի առթիվ պարգևատրումներ էին կատարել նաեւ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը, ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրջյանը. պարգևները հանձնեց Խաչիկ Ասրյանը:

Արցախի Հանրապետության «Մայրություն» հասարակական կազմակերպության նախագահ Հասմիկ Միքայելյանը «Մայրական երախտագիտություն» մեդալով պարգևատրեց կազմակերպության տասը անդամի:

«Հայոց արծիվներ» կազմակերպության հիմնադիր նախագահ Խաչիկ Ասրյանը «Լեռնահայաստանի արծիվ» ոսկյա հուշամեդալ հանձնեց կազմակերպության խորհրդի մի քանի անդամի:

Կազմակերպության խորհրդանիշով պարգևատրվեցին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանը:

Միջոցառմանը մասնակցում էր եւ ելույթով հանդես եկավ ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակ Հերմինե Նաղդալյանը:

Հանդիսության վերջում ելույթ ունեցավ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ Խաչիկ Ասրյանը՝ մասնավորապես նշելով՝ «20-րդ դարավերջին Հայկական բարձրավանդակում հայ ազգային-ազատագրական պայքարի թու ու բոլոր մեջ ծնված Արցախյան փառավոր

հերոսամարտը, ողջ հայության միասնության շնորհիվ, հայերիս պարգևեց հայոց անկախ պետականություն: Այն յուրաքանչյուրիս համար դարձավ բացարձակ արժեք այնպես, ինչպես ծնողը, ընտանիքը, հայրենիքը, իսկ Արցախյան հերոսամարտում նահատակված հերոսների շիրիմների ու Հայ առաքելական եկեղեցու առջեւ երդում-հավատով «Սյունյաց արծիվները» վերակազմակերպվեց «Հայոց արծիվներ» հայրենասիրական շարժման, որն էլ, հավատարիմ մնալով իր որդեգրած ազգային-պետական-հայրենասիրական գաղափարախոսությանը, Հայաստանում եւ Արցախում 14 տարվա ընթացքում իրականացրեց մոտ 1.440 հույժ կարելու եւ հայրենասիրական միջոցառում: Եվ այդ ամենը՝ բացառապես ձեր շնորհիվ՝ Հայաստանապաշտ արծիվներ:

Արտանց շնորհավորում են բոլորիդ եւ յուրաքանչյուրիդ՝ «Հայոց արծիվներ»-ի ծննդյան 14-րդ տարեդարձի առթիվ:

Միշտ գիտակցեք, որ դուք ավելին եք, քան մահկանացուն, որ ազգային - պետական - հայրենասիրական գաղափարախոսությունն է հայ տեսակի պահպանման եւ հզորացման առավելագույնը:

Գիտակցեք, որ Հայաստանն ավելին է, քան մենք՝ բոլորս:

Գիտակցեք, որ պետք է գործել ավելի արագ, քան ժամանակը՝ կառուցելով մեծ եւ հզոր քրիստոնյա Հայաստան, իսկ մեծ եւ հզոր քրիստոնյա Հայաստանի բնակիչը պետք է լինի հայրենասեր, օրինապաշտ, աշխատասեր, պատասխանատու եւ հավատք ունեցող քաղաքացի: Գիտակցեք, որ հայոց ազգային պետականության հետագա կառուցումն ու զորացումը պետական ու քաղաքական գործիչ, հայոց նախագահ Սերժ Սարգսյանի կողմից ղեկավարվող Հայաստանի հանրապետական կուսակցությանը եւ Հայաստանի Հանրապետության 13 ընտրական տարածքներում ՀՀ գործադիր մարմնի ու խորհրդի կողմից առաջադրված պատգամավորի թեկնածուներին»:

Հանդիսավոր միջոցառումն ավարտվեց «Հայոց արծիվներ»-ի հիմնով (խոսքը՝ Ռուզան Ասատրյանի, երաժշտությունը՝ Ռուզան Գալստյանի):

Մինչ այդ Միեր եղիագարյանը, կազմակերպության անդամների անունից, որպես շնորհակալության եւ երախտագիտության արտահայտություն, Խաչիկ Ասրյանին հանձնեց ուժի եւ հզորության խորհրդանիշ սուրը:

Հանդիսությանը մասնակցում էին մի քանի տասնյակ այլուցներ. դա էլ իր պատճառն ուներ՝ «Հայոց արծիվներ»-ը հարազատ են սյունեցիներին, քանի որ այն սկիզբ է առնում Սյունյաց լեռնաշխարհից եւ մասնավորապես «Սյունյաց արծիվներ» հասարակական կազմակերպությունից:

«Սյունյաց երկիր»

